

## ԼԱԿՏՈՒԲԱՑԻԼՆԵՐ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ՅԱՆՈՒԿՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՅԵՇՏՈՑԱՅԻՆ ԵՐԿՇԵՐՏ ՄՈՍԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄԱՆԱՍԻՐՈՒՄ Փաշայան Մ.Մ.

Երևանի պետական բժշկական համալսարանի դեղերի տեխնոլոգիայի ամբիոն Երևան, Հայաստան

Տվյալ ուսումնասիրության նպատակն է ստեղծել հեշտոցային երկշերտ մոմիկներ, որոնք միջուկում պարունակում են պրոբիոտիկներ, իսկ արտաքին շերտում՝ հակաբակտերիալ բուսական հանուկներ, նախատեսված միաժամանակ բակտերիալ վազինոզների բուժման և հեշտոցի վերագաղութացման համար: Այս մոմիկները մշակված են հատուկ եղանակով. բուսական հանուկն արտազատվելով արտաքին շերտից ճնշում է պաթոգեն մանրէների աճը, այնուհետև միջուկից դանդաղ ձերբազատվում են լիոֆիլ լակտոբացիլներ, որոնց վերակենդանացման ընթացքում ազդող նյութի կոնցենտրացիան նվազում է մինիմալ ճնշող կոնցենտրացիայից ցածր, ինչն էլ իր հերթին չի ազդում լակտոբացիլների վրա:

Պատրաստվել են չորս տեսակ երկշերտ մոմիկներ, որոնց միջուկում պարունակում են լիոֆիլ *L.delbrueckii* MH -10 կաթնաթթվային մանրէների շտամ, իսկ արտաքին շերտում՝ Հազարատերևուկ սովորականի (*Achillea millefolium*) լիոֆիլ հանուկը: Միջուկի պատրաստման համար կիրառվել են Suppocire A-25 և Novata ABPH (37-39°C) մոմիկային հիմքերը, իսկ արտաքին շերտի համար՝ ավելի ցածր հալման ջերմաստիճանով (31-35°C)՝ Witepsol H -15 և Oleum Cacao հիդրոֆոբ հիմքերը: Լակտոբացիլների ձերբազատումը հիմքերից ուսումնասիրվել է «պտտվող զամբյուղ» լուծման մեթոդով, իսկ բուսական հանուկինը ազարում՝ դիֆուզիայի եղանակով: Բուսական հանուկի առավելագույն արտազատում նկատվել է Witepsol H -15 հիմքից. ու չնայած այնի բանի, որ կակաոյի յուղն ավելի արագ է հալվում, դրանից ազդող նյութի արտազատումը լիարժեք չէ: Համաձայն ստացված արդյունքների, լակտոբացիլներ պարունակող միջուկների պատրաստման համար նպատակահարմար է կիրառել Novata ABPH հիմքը, որը ապահովում *L.delbrueckii* MH -10 շտամի ավելի դանդաղ արտազատումը և կենսունակությունը 2-8°C ջերմաստիճանի պայմաններում, 12 ամսվա ընթացքում:

Այսպիսով, համակցված երկշերտ մոմիկներում, միջուկի և արտաքին շերտի համար, որպես կրիչներ առավել նպատակահարմար է կիրառել Novata ABPH և Witepsol H-15 հիդրոֆոբ հիմքերը: Անհրաժեշտ է նշել, որ այս երկշերտ մոմիկներում կարելի է կիրառել ոչ միայն տվյալ նյութերը, այլ նաև տարբեր պրոբիոտիկներ և հակաբիոտիկներ: